ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **17.10.2019թ. ժամը 14:30**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ՈՐՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,

ՀՀ ՊՆ ՎՀՍՐԿ բժիշկ Գ.Անտոնյանը,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին

(Մ.Ամիրյան)

1.1 Քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի **27.09.2019թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն **«Դիավանտ» ՍՊԸ**-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

25.09.2019թ-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցը ուղարկել է վերը նշված փաստաթղթերը:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ հրավերի պայմաններին, մասնավորապես.

-«Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճեններ կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը.

Ինչպես նաև ներկայացված տեխնիկական բնութագրում.

Հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներ	Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներ
Բարձր հաճախականության ռենտգենյան սնող միավորը պետք է ապահովի առնվազն 650մԱ անոդային հոսանք	Բարձր հաճախականության ռենտգենյան սնող միավորը ապահովում է 800մԱ անոդային հոսանք
Կոլիմատորը պետք է ապահովի նկարահանվող դաշտի լուսադիոդային կարգավորվող ցուցանշում առնվազն 100-150 Լյուքս լուսավորմամբ	Կոլիմատորը ապահովում է նկարահանվող դաշտի լուսադիոդային կարգավորվող ցուցանշում մինչև 160 Լյուքս և ավելի լուսավորում
Ճառագաթիչի պատուհանի և կոլիմատորի գումարային զտումը պետք է համարժեք լինի 1.5մմ. Ալ. Կոլիմատորում լրացուցիչ տեղակայված զտիչը 1.0մմ.Ալ.	Ճառագաթիչի պատուհանի և կոլիմատորի գումարային զտումը 2.9մմ. Ալ. Կոլիմատորում լրացուցիչ տեղակայված զտիչը 2.0մմ.Ալ.
Նկարահանման հորիզոնական սեղանի դեկան Bucky միավորով պետք է ազատորեն տեղաշարժվի առնվազն 4 ուղություններով ապահովելով ռենտգեննկարահանում առանց սեղանի վրա հետազոտվողի լրացուցիչ դիրքավորման: Դեկայի արտաքին չափերը առնվազն՝ Ե/200*Լ/70սմ.	Նկարահանման հորիզոնական սեղանի դեկան Bucky միավորով ազատորեն տեղաշարժվում է 6 ուղություններով ապահովելով ռենտգեննկարահանում առանց սեղանի վրա հետազոտվողի լրացուցիչ դիրքավորման: Դեկայի արտաքին չափերը՝ Ե/220*Լ/75սմ.
Սեղանի բարձրությունը՝ 71+/ 2սմ.:	Սեղանի բարձրությունը կառավարվող՝ 56.5-85.0սմ.:
Օպերատորի կոնսոլը 50կՎտ. հզորության սահմաններում	Օպերատորի կոնսոլը 68կՎտ. Հզորությամբ գեներատոր
Անոդային հոսանքի ընտրության տիրույթը առնվազն 50-650մԱ: մԱվրկ. ի ընտրության տիրույթը առնվազն 0.5-600մԱվրկ.:	Անոդային հոսանքի ընտրության տիրույթը առնվազն 10-800մԱ: մԱվրկ.-ի ընտրության տիրույթը 0.1-640 մԱվրկ.:

Էլեկտրասնուցումը՝ եռաֆազ ստանդարտ էլեկտրացանցից, 380+/-10%, 50Հց. Ցանցից սպառող հզորությունը ոչ ավելի քան 35կՎԱ.:	Էլեկտրասնուցումը՝ եռաֆազ ստանդարտ էլեկտրացանցից, 400VAC, 50Հց. Ցանցից սպառող հզորությունը 68կՎԱ.:
Առավելագույն արտադրողականությունը առնվազն՝ 35x43 սմ. ֆորմատով թաղանթների՝ 50 թ/ժամ. 25x30 սմ. ֆորմատով թաղանթների՝ 65 թ/ժամ. 26x36 սմ. ֆորմատով թաղանթների՝ 75 թ/ժամ. 20x25 սմ. ֆորմատով թաղանթների՝ 90 թ/ժամ. Փիքսելի չափերը ոչ ավելի քան՝ 85.0 մկմ. (300 dpi) Առավելագույն լուծանելիությունը առնվազն՝ 35x43 սմ. ֆորմատով թաղանթների՝ 4160x5000 փիքս. 25x30 սմ. ֆորմատով թաղանթների՝ 4210x2970 փիքս. 26x36 սմ. ֆորմատով թաղանթների՝ 2925x2330 փիքս. Գորշ սանդղակը առնվազն՝ 12 բիտ. Առավելագույն խտությունը (Dmax) առնվազն՝ 3.0 Հիշողության ծավալը առնվազն՝ 1 Գբ. Արտաքին չափերը ոչ ավելի քան՝ 530x590x370 մմ Քաշը ոչ ավելի քան 35կգ.:	Առավելագույն արտադրողականությունը՝ - 35x43 սմ. ֆորմատով թաղանթների՝ 80 թ/ժամ. - 25x30 սմ. ֆորմատով թաղանթների՝ 100 թ/ժամ. - 26x36 սմ. ֆորմատով թաղանթների՝ 100 թ/ժամ. - 20x25 սմ. ֆորմատով թաղանթների՝ 100 թ/ժամ. Փիքսելի չափերը՝ 50.0 մկմ. (508 dpi) Առավելագույն լուծանելիությունը՝ - 35x43 սմ. ֆորմատով թաղանթների՝ 7040x8560 փիքս. - 25x30 սմ. ֆորմատով թաղանթների՝ 6032x5012 փիքս. - 26x36 սմ. ֆորմատով թաղանթների՝ 7200x5080 փիքս. Գորշ սանդղակը՝ 14 բիտ. Առավելագույն խտությունը (Dmax)՝ 3.3 Հիշողության ծավալը՝ 1 Գբ. Արտաքին չափերը՝ 61x63x89.3 սմ Քաշը 104կգ.:

Համաձայն հայտը նախագծող անձի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/14» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված մասնագիտական եզրակացության ***«Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի և հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի չափորոշիչների համեմատ առկա տարբերությունների վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու վերաբերյալ հարցում է կատարվել ՀՀ ՊՆ ԿԿՀՀ ճառագայթային ախտորոշման բաժանմունքի պետին: Համեմատության արդյունքում պարզվել է, որ ներկայացված ցուցանիշները հիմնականում առավել են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներից, ընդունելի են և կարող են համարվել համարժեք: Ներկայացված տվյալներով առաջարկվող գեներատորը պահանջվածից ավելի հզոր է՝ ինչը և ապահովում է հետազոտությունների առավել բարձր ցուցանիշներ: Հրավերով պահանջված տպիչը նախատեսված էր տեղադրելու սեղանի վրա ինչի պատճառով սահմանվել էին կոմպակտ չափսեր: Առաջարկված տպիչը նախատեսված է գետնին տեղադրվելու համար, չի պահանջում լրացուցիչ կահույքի առկայություն, տեխնիկական և ֆունկցիոնալ առումով գերազանցում է հրավերով պահանջված տպիչի ցուցանիշներին, առավել ժամանակակից է և ապահովում է տպագրության ավելի բարձր կետայնություն (պատկերի ավելի բարձր որակ), ինչով և պայմանավորված է նրա ավելի մեծ չափսերն ու քաշը: Առաջարկված տպիչի տեխնիկական բնութագրերը ապահովում են ՌԲ վարչության պահանջարկի կատարումը, ընդունելի են և կարող են համարվել համարժեք:***

Ներկայացված առաջարկում նշված է սարքի սնուցումը 400 VAC ցանցից, առանց լարման հնարավոր տատանումների սահմանի /հրավերով պահանջված 380 +/-10 % VAC/, որի արդյունքում հնարավոր չէ գնահատել թե արդյոք առաջարկվող սարքը էլեկտրասնուցման ցանցում լարման տատանումների արդյունքում կպահպանի աշխատունակությունը:

Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ մասնակցից պահանջել հստակեցնել էլեկտրասնուցման ցանցում լարման 380 +/-10 % VAC տատանման ժամանակ առաջարկվող թվային ռենտգեն ախտորոշման համալիրի բաղկացուցիչ մասերի աշխատանքի հնարավորությունը:

11.10.2019թ. Հիմք ընդունելով հայտը նախագծող անձի կողմից գնահատող հանձնաժողովին ներկայացված մասնագիտական եզրակացությունը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47 րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և գնումների համակարգողը ծանուցեց «Դիավանտ» ՍՊԸ ին մինչև կասեցման ժամկետի ավարտը /14.10.2019թ.-16.10.2019թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը:

1.2 17.10.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Դիավանտ» ՍՊԸ-ի հրակավորման չափորոշիչները գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/14» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող, վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից՝ սույն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/14» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվա ժամը 17:10-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)		Ա.Նազարյան
Գնահատող		Վ.Վահանյան
Գնահատող		Գ.Անտոնյան
Գնահատող		Հ.Ավետիսյան
Գնումները համակարգող		Մ.Ամիրյան